ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2021 թվական N 36

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝ *որոշում եմ.*

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 3 քաղաքացիների հատկացնել 350 000 /երեք հարյուր հիսուն հազար/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով, 5 օրյա ժամկետում, կատարել գումարի վճարում:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ.Գևորգյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**2021թ. մարտի 1 -ին, N 37**
**ք.Աշտարակ**

ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻՇԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Հանրային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասով և հիմք ընդունելով Ռ. Մխիթարյանի 2021 թվականի փետրվարի 24-ի անձնական դիմումը՝ ***որոշում եմ.***

1.2021 թվականի մարտի 1-ից Ռաֆայել Մխիթարյանին ազատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալի օգնականի պաշտոնից:
2.Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ կատարել վերջնահաշվարկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**2021թ. մարտի 1 -ին, N 38**

**ք.Աշտարակ**

# ՄԵՐԻ ԿԱՐԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հանրային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով և 9-րդ հոդվածի 10-րդ մասով և հիմք ընդունելով Մ.Սարգսյանի 2021 թվականի մարտի 1-ի անձնական դիմումը՝ *որոշում եմ.*

1.2021 թվականի մարտի 2-ից Մերի Սարգսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալի օգնականի պաշտոնում:

2.Աշխատավարձը <<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

2021թ. մարտի 4-ին, N 40
ք. Աշտարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԹԱԼԻՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2011 թվականի դեկտեմբերի 20-ի N 136-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Թալինի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2021 թվականի մարտի 5-ի մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2021թ. մարտի 4-ի N 40 որոշման

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Թալինի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2021 թվականի մարտի 5-ի մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի

1. Հրաչյա Գևորգյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գլխավոր քարտուղար /հանձնաժողովի նախագահ/
2. Գայանե Վարդանյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի պետ /հանձնաժողովի քարտուղար/
3. Տիգրան Եղիազարյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի օգնական
4. Մերի Շահազիզյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ
5. Կարեն Թաթուլյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ
6. Կարինե Վարսանյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի քարտուղարության ընդհանուր բաժնի պետ
7. Լուիզա Ղարիբյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Недействительная подпись

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 2014650144 Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

N 41                      04 03 2021թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ «ԱՇՏԱՐԱԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՃՇՏՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» 83-րդ հոդվածի 1-ին մասով, 84-րդ հոդվածի 1-ին մասի «իզ», «իդ» կետով, հաշվի առնելով «Աշտարակի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ ՓԲԸ) տնօրենի 24 փետրվարի 2021 թվականի ԱՀ-01/ Տ N 10-21 գրությունը,՝ որոշում եմ.

1. Հաստատել՝

   «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ 2020 թվականի՝

   1.1. ճշտված եկամուտների և ծախսերի նախահաշիվը համաձայն N1 հավելվածի

   1.2. ճշտված հաստիքացուցակը համաձայն N2 հավելվածի

   1.3. ուժը կորրցրած ճանաչել Արագածոտնի մարզպետի 25 մարտի 2020 թվականի N 45 որոշման, N1 և N2 հավելվածները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

---

9 մարտի 2021 թվականի N 43

ք. Աշտարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N 8 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 9-ի N 03-Ն հրամանը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի համայնքներում 2021 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական եվ մասնագիտական հսկողություն իրականացնելու մասին» N8 որոշմամբ հաստատված հավելվածի աշխատանքային խմբում լրացնել «զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Գագիկ Պողոսյան» բառերը:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**2021թ. մարտի 10-ին, N 44**

**ք.Աշտարակ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 36-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով՝ *որոշում եմ.*

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի ենթակայության առողջապահական կազմակերպությունների գործադիր մարմինների մրցութային հանձնաժողովի անդամության թեկնածուների ցանկը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2021թ. մարտի 10-ի N 44 որոշման

# ՑԱՆԿ

## Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի ենթակայության առողջապահական կազմակերպությունների գործադիր մարմինների մրցութային հանձնաժողովի անդամության թեկնածուների

| | | |
|---|---|---|
| Դ.Գևորգյան | - | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետ |
| Հ.Գուլյան | - | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալ |
| Հ.Գևորգյան | - | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի Գլխավոր քարտուղար |
| Ռ.Մկրտչյան | - | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի Գլխավոր քարտուղարի տեղակալ |
| Վ.Բարխուդարյան | - | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի խորհրդական |
| Մ.Բադալյան | - | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի օգնական |
| Տ.Եղիազարյան | - | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի օգնական |
| Ն.Գալստյան | - | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ |
| Ս.Սողոմոնյան կրթության, | - | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի մշակույթի և սպորտի վարչության պետ |
| Հ.Ասատրյան | - | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ |
| Յու.Ազատյան | - | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ |
| Գ.Ներսեսյան | - | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի քարտուղարության պետ |
| Գ.Վարդանյան | - | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի պետ |
| Լ.Ղարիբյան | - | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժնի պետ |
| Գ.Պողոսյան | - | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ |
| Ա.Մելքոնյան | - | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Недействительная подпись

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 2014650144 Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2021թ. մարտի 11-ին, N 45**
**ք.Աշտարակ**

### «ԹԱԼԻՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԲՈՂՈՔԸ ՔՆՆԱՐԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգի» 67-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վ. Գրիգորյանի 2021 թվականի մարտի 11 -ի N ՎԳ/05/4535-2021 գրությունը և մրցույթի մասնակից Տաթևիկ Մնացականյանի 2021 թվականի մարտի 5-ի դիմումը՝ *որոշում եմ*.

Ստեղծել «Թալինի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2021 թվականի մարտի 5-ին անցկացված մրցույթի արդյունքների վերաբերյալ մրցույթի մասնակից Տաթևիկ Մնացականյանի բողոքը քննարկող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված՝

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի
2021 թվականի մարտի 11-ի N 45 որոշման

# ԿԱԶՄ

## «ԹԱԼԻՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-ԻՆ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՏԱԹԵՎԻԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ԲՈՂՈՔԸ ՔՆՆԱՐԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| | |
|---|---|
| Արմեն Սաֆարյան | - Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության խորհրդատու |
| Դավիթ Հովսեփյան | - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության անձնակազմի կառավարման վարչության գլխավոր մասնագետ |
| Տաթևիկ Գրիգորյան | - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետ |
| Արմեն Կարապետյան | - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության գլխավոր մասնագետ |

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի
մարզպետարանի գլխավոր քարտուղար

Недействительная подпись

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 2014650144 Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
# ՈՐՈՇՈՒՄ

2021թ. մարտի 11-ին, N 46
ք. Աշտարակ

## ՄՐԱԶ ՏԻՏԱԼԻ ՍԱԴՈՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՍԻՓԱՆԻ Ֆ.ՈՒՍԸՎԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածով և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետով՝ ***որոշում եմ.***

2021 թվականի մարտի 11-ից Մրազ Սադոյանին ազատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Սիփանի Ֆ. Ուլըվի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով 2016 թվականի մարտի 11-ին նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**ՈՐՈՇՈՒՄ**

2021թ. մարտի 11-ին, N 47
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՍԻՓԱՆԻ Ֆ.ՈՒՍԸՎԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶՈՒՐԲԱ ԱՎԴԱԼՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 69-րդ կետը և Զ. Ավդալյանի 2021 թվականի մարտի 11-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

2021 թվականի մարտի 11-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Սիփանի Ֆ.Ուսըվի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավոր դնել ուսուցիչ Զուրբա Ջասմի Ավդալյանի վրա՝ մինչև <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված տնօրենի նշանակումը:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**2021թ. մարտի 15-ին, N 49**
**ք.Աշտարակ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 45 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասով և հիմք ընդունելով Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վ.Գրիգորյանի 2021 թվականի մարտի 15-ի N ՎԳ/05/4837-2021 գրությունը՝ **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2021 թվականի մարտի 11-ի <<Թալինի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքների վերաբերյալ մրցույթի մասնակցի բողոքը քննարկող հանձնաժողով ստեղծելու մասին>> N 45 որոշմամբ հաստատված հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1)<<Արմեն Սաֆարյան – Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության խորհրդատու>> բառերը փոխարինել <<Անուշ Պողոսյան - Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության արտահիվանդանոցային բժշկական օգնության քաղաքականության բաժնի պետ>> բառերով:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

2021թ. մարտի 16-ին, N 50
ք. Աշտարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՍԱՍՈՒՆԻԿԻ Գ. ՉԱՈՒՇԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՔՐԻՍՏԻՆԵ ԱՎԱԳՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 69-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Սասունիկի Գ. Չաուշի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անահիտ Իսրայելյանի 2021 թվական մարտի 11-ի դիմումը, նույն դպրոցի ուսուցչուհի Քրիստինե Ավագյանի 2021 թվականի մարտի 12-ի դիմումը և <<Սասունիկի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կ. Դեմոյանի 2021 թվականի մարտի 16-ի մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտից քաղվածքը՝ ***որոշում եմ.***

2021 թվականի մարտի 16-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Սասունիկի Գ. Չաուշի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել ուսուցչուհի Քրիստինե Ավագյանի վրա՝ մինչև հիմքի վերացումը:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. մարտի 16 -ին, N 51
ք. Աշտարակ

ՎԱՀԱԳՆ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՄԱՐՏՈՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԹԼԻԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի <<բ>> ենթակետով, ***որոշում եմ***.

2021թվականի մարտի 16-ից Վահագն Մարտոյանին ազատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Թլիկի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով 2017 թվականի փետրվարի 1-ին նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2021թ. մարտի 17-ին, N 52**
**ք.Աշտարակ**

### ՏԱԹԵՎԻԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԹԱԼԻՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2011 թվականի դեկտեմբերի 20-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2007 թվականի փետրվարի 2-ի թիվ 4-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 136-Ն որոշմամբ հաստատված կարգի 69-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2021 թվականի մարտի 11-ի <<<<Թալինի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքների վերաբերյալ մրցույթի մասնակցի բողոքը քննարկող հանձնաժողով ստեղծելու մասին>> N 45 որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2021 թվականի մարտի 16-ի եզրակացությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Թալինի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2021 թվականի մարտի 5-ին անցկացված մրցույթում Տաթևիկ Մարտունիկի Մնացականյանին ճանաչել հաղթող:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

2021թ. մարտի 17-ին, N 53
ք. Աշտարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԹԼԻԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԱԼԻԲԵԿ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 69-րդ կետը և Զ. Ղազարյանի 2021 թվականի մարտի 16-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

2021 թվականի մարտի 16-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Թլիկի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավոր դնել ուսուցիչ Զալիբեկ Ղազարյանի վրա՝ մինչև <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված տնօրենի նշանակումը:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ *05004247* ...

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**ՈՐՈՇՈՒՄ**

2021թ. մարտի 23-ին, N 54
ք. Աշտարակ

ՍԱՐԳԻՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԹԱԼԻՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 96-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2011 թվականի դեկտեմբերի 20-ի N 136-Ն որոշմամբ հաստատված կարգի 71-րդ կետի պահանջները, 2021 թվականի մարտի 11-ի N 45 որոշումը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Թալինի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի 2021 թվականի մարտի 5-ի N 4 որոշումը և Ս. Ավագյանի 2021 թվականի մարտի 5-ի անձնական դիմումը՝ ***որոշում եմ.***

2021 թվականի մարտի 23-ից Սարգիս Հովսեփի Ավագյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Թալինի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնում նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

Աշխատավարձը՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Թալինի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հաստիքացուցակով սահմանված կարգով:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ "05004247"

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մարտի 2021 թվական N 55

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝ *որոշում եմ.*

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 5 քաղաքացիների հատկացնել 470 000 /չորս հարյուր յոթանասուն հազար/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով, 5 օրյա ժամկետում, կատարել գումարի վճարում:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ.Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

2021թ. մարտի 26-ին, N 57
ք. Աշտարակ

## ՄԱՆՈՒՇԱԿ ԽԱՉԻԿԻ ՇԱՏՈՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՐՏԵՆԻԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի <<բ>> ենթակետով, ***որոշում եմ***.

2021թվականի մարտի 29-ից Մանուշակ Շատոյանին ազատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Արտենիի թիվ 1 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով 2017 թվականի հունվարի 19-ին նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

11

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 58 26 մարտի 2021թ.

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ «ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՃՇՏՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» 83-րդ հոդվածի 1-ին մասով, 84-րդ հոդվածի 1-ին մասի «իգ», «իդ» կետով, հաշվի առնելով «Ծաղկահովիտի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ ՓԲԸ) տնօրենի 19 մարտի 2021 թվականի 31 գրությունը,՝ որոշում եմ.

1. Հաստատել՝
   «Ծաղկահովիտի առողջության կենտրոն» ՓԲԸ 2020 թվականի՝

1.1. ճշտված եկամուտների և ծախսերի նախահաշիվը համաձայն N1 հավելվածի

1.2. ճշտված հաստիքացուցակը համաձայն N2 հավելվածի

1.3. ուժը կորցրած ճանաչել Արագածոտնի մարզպետի 03 ապրիլի 2020 թվականի N 48 որոշման, N1 և N2 հավելվածները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**ՈՐՈՇՈՒՄ**

2021թ. մարտի 31-ին, N 59
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՐՏԵՆԻԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԳԱՐԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 69-րդ կետը և Մ. Հարությունյանի 2021 թվականի մարտի 29-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

2021 թվականի մարտի 31-ից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Արտենիի թիվ 1 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավոր դնել փոխտնօրեն Մարգարիտ Հարությունյանի վրա՝ մինչև <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված տնօրենի նշանակումը:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
ՈՐՈՇՈՒՄ

2021թ. ապրիլի 1 -ին, N 60
ք. Աշտարակ

ԼԻԼԻԹ ՎԱՉԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՈՒՇԻԻ Ն. ԱՂԲԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ուշիի Ն.Աղբալյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար 2021 թվականի մարտի 30-ին անցկացված մրցույթի արդյունքները և Լ.Հարությունյանի 2021 թվականի մարտի 31-ի անձնական դիմումը՝ *որոշում եմ.*

Լիլիթ Վաչիկի Հարությունյանին 2021 թվականի ապրիլի 2-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ուշիի Ն.Աղբալյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ